

**ՀԱՐԱՏՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ  
ԻՄԱՅՈՒՄԸ**

Հարստութիւնդ, եթէ Աստուծմէ ա-  
ռի՛ր, վստահ եղի՛ր եւ հաւատա՛, որ զա-  
ւակիդ կրկին առատութեամբ կու տայ,  
եթէ ուզես: Պիտի ըսես, ի՞նչպէս եթէ  
ուզեմ: Ինչ որ Աստուծմէ պարգեւ առի  
եւ ունիս դարձեալ Աստուծոյ պարգեւէ,  
իսկ զաւակիդ բարեպաշտութեանդ  
օրինակը ձգէ՛ եւ ոչ թէ հարստութիւնդ:  
Աղքատներու երամին ըրած գթութեանդ  
անոր վերակացու ձգէ Աստուծոյ ան-  
սահման գթութիւնը եւ ոչ թէ փայլուն  
ուսկին: Սորվեցո՛ւր ողորմութեան բա-  
րիքը եւ ոչ թէ տմարդութեան չարիքը:  
Սորվեցո՛ւր զԱստուած պաշտել եւ ոչ  
թէ մամոնան: Սորվեցո՛ւր երկնաւոր  
բաներու ցանկալ եւ ոչ թէ երկրաւորնե-  
րուն: Վարժեցո՛ւր պատուասէր ըլլալ  
երկնային պատիւին եւ ոչ թէ մեր սին  
կեանքի ծաղկաթափ փառքին: Սոր-  
վեցո՛ւր սիրել ոչ թէ առօրեայ անցաւոր  
կեանքը՝ լի դառնութեամբ ու թշուա-  
ռութեամբ, այլ՝ կայունը, մնայունը եւ  
բիրապատիկ հանգիստով լեցունը:  
Իսկ եթէ անիրաւութենէ, զրկանքներէ  
հաւաքած հարստութիւնդ զաւակնե-  
րուդ պիտի թողուս, գիտցի՛ր եւ հա-  
ւատա՛ թէ, ուր որ անիրաւութիւն եւ  
զրկանք կայ, հոն Աստուծոյ բարկու-  
թիւնը կը գտնուի:

**Սարգիս Շնորհալի (Յորդորակներ)**

**ԿԱՆԹԵՂ**



Խորանին վրայ փոքր ճախա-  
րակ մը կ'ըլլար եւ հաւասարակշռու-  
թիւնը պահող յախճապակիէ գունդ  
մը, որուն մէջ կապարի փոքր  
գնդիկներ լեցուած կ'ըլլային, դի-  
րացնելու համար կանթեղը վար քա-  
շելու, նոր ձէթ լեցնելու, պատրոյգը  
փոխելու եւ վերստին վեր բարձրա-  
ցընելու աշխատանքը:

Ներկայիս կանթեղներու գործա-  
ծութիւնը նուազած է, հիմնականօրէն  
մէկ կանթեղ կը տեսնենք Ս. Սե-  
ղանին վրայ կախուած, որպէս  
մշտավառ կանթեղ:

Կանթեղներ՝ հաւատացեալներու  
պաշտամունքին արժանացած  
սրբանկարներուն վերեւ, ուր հաւա-  
տացեալներ մոմ վարելով իրենց  
ուխտը կը կատարեն եւ սրտագեղ  
աղերսանքներով կ'աղօթեն:

â Այսօր ընդհանրացած երեսոյթ է,  
արծաթեայ կանթեղներուն մէջ փո-  
խան ձէթի եւ պատրոյգի՝  
ելեկտրական լոյսեր կը վառեն:

**ՀԱՍՅԷ.**



ԺԴ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021** ԹԻԻ 49

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**  
Ես. 36.22-37.11 Ա.Թս. 4.1-11  
**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 13.1-9**

**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 13.1-9**

Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք  
Պիղատոսի կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ զոհ կը մատուցանէին: Յիսուս  
անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք, թէ սպաննուող գալիլիացիները միւս բոլոր գալիլի-  
իացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ  
ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը  
մտածէք այն տասնութ մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը  
Սելովամի մէջ, եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին Երուսաղէմի  
բոլոր բնակիչներէն: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք՝ եթէ  
չապաշխարէք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար, որ իր այգիին մէջ թգենի  
մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թգենիին վրայ  
պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս երրորդ տարին է, որ կու գամ թուզ  
քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրե՛ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ  
գրաւէ»: Այգեպանը պատասխանեց. «Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ: Ես իր շուրջի  
հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ  
տայ, ապա թէ ոչ գալ տարի կտրե՛ գայն»:

Աշխարհական թէ հոգեւորական, ամէնուն պարտքն է աշխատիլ, որ մաքուր  
ըլլանք մեր խղիմտանքին եւ Աստուծոյ առջեւ, սիրով ու լայնախոհ ոգիով յարգենք  
մեր Ս. եկեղեցւոյ կարգն ու կանոնը, գործնականապէս աշխատինք անոր բարեկար-  
գութեան եւ պայծառութեան, եւ ո՛չ թէ գլուխ բռնելով եւ անձնական կարիքներու հե-  
տեւելով:

Իծրախտաբար, ոմանք ո՛չ թէ միայն չեն գիտեր խոստովանութեան եւ ապաշխա-  
րութեան նշանակութիւնը եւ չեն զգար անոնց պէտքը իրենց կեանքին մէջ, այլ՝ ձեւա-  
կան եւ աւելորդ բաներ կը նկատեն զանոնք:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### Ս. ԹԱԴԷՆՈՍ ԵՒ Ս. ԲԱՐՔՈՂԻՄԵՆՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ՏՕՆ

Ամեն տարի, Դեկտեմբեր ամսուան ընթացքին կը յիշատակուի Յիսուսի առաջին աշակերտներէն՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն սօնը: Անոնք Հայաստանի մէջ քրիստոնէութեան քարոզչութիւնը սկսած են կատարել առաջին դարէն սկսեալ, Յիսուսի համբարձումէն ետք:

Հայաստանը այդ օրերուն կը նկատուէր կարեւոր եւ բազմամարդ երկիր: Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի կը վիճակուի Հայաստանէն ներս քրիստոնէութիւնը տարածելու դժուար գործը, տրուած ըլլալով, որ այդ տարիներուն հայ ժողովուրդը բազմաստիճան կրօն ունէր:

### Ո՞Վ ԷՐ Ս. ԹԱԴԷՆՈՍ

Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Յայտնի չէ, թէ երբ ծնած է, բայց նահատակուած է իր քարոզչական առաքելութեան նամբուն վրայ՝ շուրջ 46 թուականին:

Թադէոս առաքել կը յաջողի քրիստոնէութեան կրօնը տարածել հայոց արքունական պալատէն ներս՝ քրիստոնէայ մկրտելով Սանդուխտ կոյսը, որ Սանատրուկ թագաւորին աղջիկն էր: Թագաւորը կը փորձէ իր աղջիկը վերադարձնել բուրմբուր պաշտամունքին եւ ձախողելով սպաննել կու տայ թէ՛ Սանդուխտ կոյսը, թէ՛ Թադէոս առաքելը: Մինչ այդ Արտագ գաւառի բնակչութիւնը, հետեւած ըլլալով Ս. Թադէոսի քարոզչութեան, անոր յիշատակին կը հիմնէ Թադէի վանքը շուրջ 66 թուին, որ դարերու ընթացքին կը դառնայ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոններէն մէկը:

### Ո՞Վ ԷՐ Ս. ԲԱՐՔՈՂԻՄԵՆՈՍ

Բարթողիմէոս Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Անոր կը տրուի նաեւ Նաթանայէլ անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ Նուէր»:

Ան քրիստոնէութիւնը քարոզած է Հնդկաստանի, Պարսկաստանի, Արաբիոյ եւ Հայաստանի մէջ: 66 թուին տեղի ունեցած է իր նահատակութիւնը:

Բարթողիմէոս Ս. Թադէոս առաքելին հետ, կը նկատուի Հայաստանի մէջ քրիստոնէութեան առաջին քարոզիչը:

Առաքելը Հայաստանի մէջ իր քարոզչական աշխատանքը սկսած է Գողթան գաւառէն, ապա՝ Սիւնեաց, Արարատեան եւ Վասպուրական նահանգներուն մէջ: Ան կը յաջողի նաեւ հայոց արքունի շրջանակներէն ներս ալ քարոզչութիւն կատարել: Քրիստոնէայ կը մկրտէ Սանատրուկ թագաւորին քոյրը՝ Ոգուհին եւ հազարապետ Տերենտիոսը: Հետեւանքը ա՛յն կ'ըլլայ, որ թագաւորը սպաննել կու տայ թէ՛ քոյրը, թէ՛ հազարապետը, թէ՛ առաքելը:

Հայ ժողովուրդը, ի յիշատակ Ս. Բարթողիմէոսին, չորրորդ դարուն Վասպուրականի Ադրակ գաւառին մէջ կը շինէ վանք մը, որուն չորս աւանդատուներէն մէկուն մէջ գոյութիւն ունի տապանաբար մը, որուն վրայ արձանագրուած է, թէ հոն թաղուած է Ս. Բարթողիմէոս Առաքելը:

Վանքը ներկայիս կիսաւեր վիճակի մէջ է: Շնորհիւ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն, Հայաստանեայց Մայր Եկեղեցին **ԱՌԱՔԵՆԱԿԱՆ** կը կոչուի՝ Յիսուսի առաքելներու նախաձեռնութեամբ հիմնուած ըլլալուն համար:

## Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Մ

### ԶԱՅՅ ՈՐԻՇ ԳՈՒՌ ՓՐԿՈՒԹԵԱՆ

«Ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի» (Յե. 10.9): Քրիստոս իր այս հաստատումով, ըսել չ'ուզէր, թէ ինք պարզապէս մէկն է, որ մարդիկը փրկութեան կը տանի: Իր ըսել ուզածը այն է, որ ինք մէկ է միակ ճամբան է փրկութեան: Ոչ ոք կրնայ փրկութիւն ձեռք ձգել առանց իրեն: Մտցնող անձը, անձը ուրկէ կը մտնենք եւ անձը ուր կը մտնենք՝ Յիսուս ինքն է:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ

Երբեմն մարդիկ հարց կու տան մեզի, թէ հեթանոսները պիտի փրկուի՞ն: Ես պիտի չպատասխանեմ այս հարցումին, այլ՝ պարզապէս պիտի յիշեցնեմ ձեզի Պօղոս առաքելին խօսքը. «Տէր Յիսուս Քրիստոսի հաւատայ եւ ամբողջ ընտանիքովդ կը փրկուիս» (Գրծ. 16.31): Այլուր առաքելը կը հաստատէ, թէ կրնանք արդարանալ «միայն Յիսուս Քրիստոսի հաւատալով» (Գղ 2.16): Այս է նման համարներ ցոյց կու տան, որ Յիսուս փրկութեան առաջնորդող դուռն է մէկը չէ, այլ՝ մէկ է միակ դուռն է: Չկայ ուրիշ դուռ, որովհետեւ չկայ ուրիշ մէկը, որ խաչուեցաւ մեր փրկութեան համար:

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

### ԵԹԷ Կ՛ՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԸ, ԹԷ ԱՍՏՈՒԹՈՅ ԱՊԱՐԻՆՈՂԸ ԻՆՉ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՏՆԷ, ԿԱՐՊԱ՝ ՍԱԳՄՈՍ 46

Աստուած է մեր ապաւենն ու գործիւնը, նեղութեանց մէջ շուտով հասնող օգնականը: Հետեւաբար մենք չենք վախնար, նոյնիսկ եթէ աշխարհը սարսի, եւ լեռները իյնան ծովերուն խորիւր: Նոյնիսկ եթէ ալիքները շառաչեն ու փրփրին, եւ լեռները դողան անոնց կատարողութենէն:

Գետ մը կայ, որ իր վտակներով կ'ուրախացնէ Աստուծոյ փառաբեր, բարձեալին սուրբ բնակարանը: Աստուած ինք այդ փառաբեր մէջ է, ուստի անիկա անասան է, որովհետեւ Աստուած կ'օգնէ անոր՝ ամէն օր: Ինչքան ալ ազգեր խռովի մատնուին, թագաւորութիւնները սասանին, բայց երբ Աստուած որոտայ՝ աշխարհն ամբողջ կը հալի:

Ամենակալ Տէրը մեզի հետ է, մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է: Եկէ՛ք, տեսէ՛ք Տիրոջ գործերը, գարմանահրաշ գործերը, որ ան կ'ընէ երկրի վրայ: Աշխարհի չորս անկիւններուն՝ պատերազմները կը դադրեցնէ, աղեղները կը կոտրէ, նիգակները կը փշրէ, եւ վահանները կրակով կ'այրէ: «Դադրեցուցէ՛ք ձեր կռիւները եւ նստեցէ՛ք, թէ ե՛ս եմ Աստուածը, ե՛ս է որ կ'իշխեմ ազգերուն, ե՛ս կը տիրեմ աշխարհին»: Ամենակալ Տէր մեզի հետ է. մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է: